Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-23/3-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 19 ապրիլի 2023թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Ավետյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Է. Բաղալյան, Ա. Սիմոնյանը, Ս. Ալեքսանյանը և Տ. Բոյախչյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների (ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատ համայնքի բաժանարար N2 («Դամբուլներ» կոչվող հողատարածքների ոռոգման ներտնտեսային 1000մ երկարությամբ) ջրանցքի վերակառուցման, ՀՀ Արարատի մարզի Քաղցրաշեն - 1 պոմպակայանի 2-րդ հերթի մղման ավազան ջուր տեղափոխող D=500մմ տրամագծով, L=190գծ.մ երկարությամբ մետաղական խողովակաշարի տեղադրման և «Արմաշ» ջրհան կայանի ճնշումային խողովակաշարի Սուրենավան համայնքում IV գոտու հեռացնող ջրատարի վերականգնման աշխատանքների) ձեռքբերման ՋԿ-ԳՀԱՇՁԲ-23/3-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակից «ԲԵՐԴՇԻՆ» ՍՊԸ-ն՝ սահմանված ժամկետում ներկայացրել է 04.04.2023թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով մասնակից «ԲԵՐԴՇԻՆ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-23/3-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների ընտրված մասնակից հայտարարել «ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին,
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԱՇՁԲ-23/3-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար անգործության ժամկետը կիրառելի չէ:

3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԱՇՁԲ-23/3-Ա ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների ընտրված մասնակից

«ՄՄՎ ՇԻՆԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Ն. Ավետյան
	_____	Է. Բաղալյան
անդամներ	_____	Ա. Սիմոնյան
	_____	Ս. Ալեքսանյան
	_____	Տ. Բոյախչյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան